Դշիս (4 Ապրէլ) նոր զատին զօլ ելաւ. և օրս ըզ-
կասմցի տղայ Պաթմանին հանեցին ի քիւրէկէն եՃ
զուռուշով բաղում արհեստիւ. և ըսկսան ի քրիստո-
նէիցն ժողովել յամենայն տեղիս և յեկեղեցիս, բա-
զում ջանիւ հազիւ թեթևացուցին զպարտս դրամին։
Այս ըմբռնեցաւ ի ժամանակ Տէվրիշ Մէհէմէտ փաշա-
յին, վասն զի ելեալ սա գնալ ընդ գնացողացն ի տեղի
իւր, քանզի աստ պանդուխտ էր, և ի գնալն սովո-
րութիւն է ամենեցուն զի զկերպս փոխեն ի տաճկի
կերպ, վասն զի ոչ ոք խօսեսցի ի ճանապարհին և ան-
երկիւղ լիցին։ Սա այլ ըստ այսմ բանի՝ փոխեալ էր
զկերպն աստ ի քաղաքս և ընդ անցանելն յՈւսկիւ-
տարն ի մէջ նաւին նոյն ձևովն էր, և ընդ սմա կան
ճանապարհակից Տաճկունքն մտեալ յայնմ նաւի. և
իմացեալ Տաճկացն յազգմանէն սատանայի զհայու-
թիւն նորա և ըմբռնեալ զնա ի նոյն կերպին, դար-
ձուցեալ զնա յետս առ քաղաքս և բոզոք բարձեալ
առ հասարակ ամենայն ռամկաց Տաճկին. անհաւա-
տիցն կուտելով ի վերայ նորա և բերին զնա առ վէ-
զիրն։ Տեսեալ վէզիրին յայնմ հասակի վայելուչ եւ
շքեղակերպ, ասէ նմա թէ Դու ի՞նչ ես կամ յո՞ր հա-
ւատոց. և նա պատասխանեաց թէ Քրիստոնեայ եմ։
Եւ զի՞նդ յայդմ կերպի ես. եւ նա ասէ. Վասն
ահի ճանապարհի այսպէս արարի։ Եւ վէզիրն ասէ.
Եւ զի լաւ կերպ է՝ կացցէ արդ ի վերայ քո և ուրա-
ցիր զՔրիստոս և դարձ[իր] յօրէնս մեր. տացուք և
այլ քեզ մեծութիւն, որպէս զի բարւոք վայելես-
ցես զկեանս քո։ Եւ նա ասէ. Զքրիստոս իմ ոչ ու-
րացայց եթէ զաշխարհս ևս տայցես։ Եւ վէզիրին ի
բարկութիւն շարժեալ, հրաման տայ դահճացն զի հար-
կանիցեն զնա ի վերայ ոտիցն և որովայնի անհամար,
մինչև ասել բազմաց թէ Մեռաւ. և ապա վէզիրին
տեսեալ զայն, յղեաց առ մուֆտին զչարչարեալն՝ ե-